Արձանագրություն N 4
Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«01» «հուլիսի» 2021թ. ժամը 15:00
Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ	Գևորգ Սիմոնյան (Բացակա)
Հանձնաժողովի անդամներ	Կարեն Խաչատրյան, Սմբատ Սմբատյան, Հարություն Վարդանյան, Արամ Գրիգորյան (Բացակա)
Հանձնաժողովի քարտուղար	Միհրան Համբարձումյան

1. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Կ. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

Գրիգորյան Շին ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում **26, 27, 29, 33, 36 և 39-րդ տողերի մասով առկա չեն առաջարկվող սարքերի և սարքավորումների մոդելների և արտադրողների մասին տեղեկատվությունը**, իսկ **9-րդ տողի մասով պահանջ է եղել Vents 125PF, սակայն առաջարկվել է Vents 100PF, որը համարժեք չէ պահանջվող սարքին**:

Ագաթ 777 ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթի մի շարք կշիռներ չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները.

1, 22, 23, 24, 25, 33, 36 և 37-րդ կետերում **առկա չեն առաջարկվող սարքերի և սարքավորումների մոդելների և արտադրողների մասին տեղեկատվությունը**

2, 3, 4, 11, 12, 13, 14 և 15 կետերում առաջարկվող սարքերի մոդելների համացանցում առկա տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

26, 27, 28 և 29-րդ կետերում առաջարկվող սարքերի մոդելների մասին տեղեկատվությունը հնարավոր չէ գտնել համացանցում (կարծում ենք տեխնիկական վրիպակ է), առաջարկում ենք նշել շտկված արտադրողի և մոդելի անվանում:

Գոհարիկ ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները.

2, 3, 4, 11, 12, 13, 14, 15, 28, 29, 36, 37, 38 և 39-րդ կետերում **առկա չեն առաջարկվող սարքերի և սարքավորումների մոդելների մասին տեղեկատվությունը**

16 և 17-րդ կետորում առաջարկվող սարքավորումների պոմպը ռադիալ է, սակայն հրավերով պահանջվում է կնետրոնախույս,

26 և 27-րդ կետերում առաջարկվող սարքերի մոդելների մասին տեղեկատվությունը հնարավոր չէ գտնել համացանցում (կարծում ենք տեխնիկական վրիպակ է), առաջարկում ենք նշել շտկված արտադրողի և մոդելի անվանում:

33-րդ կետի համար հրավերով պահանջվել է G=6մ3/ժամ, առաջարկվող մոդելի G=5,4մ3/ժամ՝ համաձայն համացանցում առկա տեղեկատվության:

Բիդեք ՍՊԸ – Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ ՀԳ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում **1, 24, 25, 26, 27, 29, 30, 31, 33, 36, 37, 38 և 39-րդ տողերի մասով առկա չեն առաջարկվող սարքերի և սարքավորումների մոդելների և արտադրողների մասին տեղեկատվությունը,**

Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ ՓԲԸ- ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները.

26-րդ կետով առաջարկվող սարքավորման չափսերը՝ համաձայն համացանցում առկա տեղեկատվության, չի համապատասխանում հրավերի պահանջներին,

27-րդ կետով առաջարկվող S-830 մոդելը չի համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ S-820 մոդելը՝ համապատասխանում է,

33 և 37-րդ կետերում առաջարկվող սարքավորումների տեխնիկական բնութագրերը՝ համաձայն համացանցում առկա տեղեկատվության, չի համապատասխանում հրավերի պահանջներին

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետը՝ մասնակիցներին առաջարկվում է **ծանուցման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում** շտկել վերոնշյալ թերությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Խաչատրյան)

«ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հուլիսի 08-ին ժամը 15:00-ին, ք. Երևան, Կատավարության տուն 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահող	_____	Կարեն Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ	_____	Սմբատ Սմբատյան
	_____	Հարություն Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Միհրան Համբարձումյան